25
ՄԱՅԻՍԻ
2020

Luys Lnyu®

COVID-19



ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ (COVID-19) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ (COVID-19) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Luys Lույս®

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

2. ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ 1

2.1. Քաղաքացիական իրավունք և դատավարություն 1

ա. Դատարանների գործունեության կազմակերպում 1

բ. Թվային գործիքների կիրառում 3

գ. Քաղաքացիաիրավական և դատավարական ժամկետներ 4

դ. Դատական ակտերի հարկադիր կատարում 5

ե. Նոտարիատ 6

2.2. Քրեական իրավունք և դատավարություն 6

ա. Քրեակատարողական հիմնարկներ և խափանման միջոցների կիրառում 6

3. ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 10

ա. Դատարանների գործունեության կազմակերպում 10

բ. Դատական ակտերի հարկադիր կատարում 11

գ. Քրեակատարողական հիմնարկներ և խափանման միջոցների կիրառում 13

4. ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 13

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19, այսուհետ՝ վարակ) տարածումը աշխարհում ստիպել է փնտրել և ներդնել այլընտրանքային կառուցակարգեր, այնպես, որ հնարավոր լինի ապահովել մի կողմից՝ պետական մարմինների անխափան գործառնությունը, հանրային ծառայությունների մատուցումը, մյուս կողմից՝ կասեցնել հիվանդության տարածումը և ապահովել հանրային առողջությունն ու անվտանգությունը[1]:

Հանրային ծառայությունների արդյունավետ մատուցումը չի կարող շրջանցել արդարադատության ոլորտը, քանի որ ժամանակակից իրավական պետությունների առանցքում մարդն է, նրա արժանապատվությունն ու իրավունքները: Պետությունը պարտավոր է երաշխավորել մարդու հիմնական իրավունքների իրականացման պատշաճ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Ուստի, հետազոտության մեջ ուսումնասիրվել են վարակի հատևանքները կանխելու նպատակով արդարադատության ոլորտում տարբեր երկրներում ձեռնարկված միջոցառումները, այդ թվում՝ քրեական, քաղաքացիական իրավունքի և դատավարության, էլեկտրոնային արդարադատության ոլորտներում, ինչպես նաև քրեակատարողական իրավունքում (մաս 2): Համեմատականներ անցկացնելով վարակով պայմանավորված միջոցառումների միջև Հայաստանում (մաս 3) և այլ երկրներում՝ ներկայացված են արդարադատության ոլորտում լրացուցիչ միջոցառումների առաջարկներ (մաս 4):

2. ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

2.1. Քաղաքացիական իրավունք և դատավարություն

ա. Դատարանների գործունեության կազմակերպում

Ֆրանսիայում դատարանները քննում են բացառապես հրատապ գործերը (օրինակ՝ դատական ակտերի հարկադիր կատարում, երեխաների իրավունքների պաշտպանություն և այլն): Մնացած գործերի քննությունը հետաձգվում կամ կասեցվում է անորոշ ժամկետով: Դատական նիստերը կարող են անցկացվել դռնփակ կամ չեղարկվել: Կողմերը կարող են կապվել դատարանին միայն գրավոր եղանակով: Վարույթի ընթացքում դատավորը կարող է օգտագործել կապի ցանկացած միջոց (ներառյալ՝ հեռախոս, էլեկտրոնային փոստ կամ նամակագրական կապ) կողմերին

[1] Օրինակ, մայիսի 11-19-ը Հայաստանում հիվանդների թիվը աճել է եռանիշ թվերով: ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի կայք՝ https://bit.ly/2zfbf39 (այցելվել է 20.05.2020թ.):

տեղեկություններ փոխանցելու կամ լսելու համար: Բոլոր գործերը կարող են քննվել միանձնյա կարգով[2]:

Լատվիայում քաղաքացիական գործերը քննվում են գրավոր ընթացակարգով, եթե դատարանը հնարավոր է համարում նման ընթացակարգը, և եթե դա չի խախտում կողմերի իրավունքները: Գրավոր ընթացակարգը կիրառվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է բանավոր ընթացակարգով քննելու ծայրահեղ անհրաժեշտություն: Բանավոր ընթացակարգի դեպքում նախատեսվում է նաև հնարավորության դեպքում գործը հեռավար եղանակով քննելու մեխանիզմ: Մայիսի 12-ից սկսած գործերը կարող են քննվել դատական նիստերի դահլիճում՝ պահպանելով կառավարության սահմանած պահանջները[3]:

Լեհաստանում դատարաններին հնարավորություն է ընձեռվել միմյանց միջև բաշխել դատական գործերը: Գործի փոխանցումը կրում է ժամանակավոր բնույթ և կատարվում է հրատապ լուծում պահանջող դեպքերում[4]: Բաշխման նպատակն է կանխել վարակի տարածումը՝ դատարաններում կուտակումներից խուսափելու միջոցով: Միաժամանակ կիրառվում է դատավորներին գործուղելու հնարավորությունը այն դեպքերում, երբ այլ դատարանները ծանրաբեռնված են[5]:

Գերմանիայի դատարանների աշխատանքը ապահովում է անձնակազմի մի մասի ուժերով: Կողմերի ներկայությամբ գործերի քննությունը հետաձգվել է մինչև 6 ամսով և իրականացվում է միայն հրատապ դեպքերում: Գործերի քննությունը հետաձգելու ժամկետի սահմանումը թողնված է դատարաններին՝ կախված տարածաշրջանային առանձնահատկություններից[6]:

Վարակի տարածումը կանխելու նպատակով **Սինգապուրի** Գերագույն դատարանի ընդունած պլանի համաձայն (justice continuity plan) դատարանի կազմը բաժանվել է երկու թիմի՝ «Ա» և «Բ»: Պլանի համաձայն՝ երկու թիմերի միջև ֆիզիկական կոնտակտ չպետք է լինի: Յուրաքանչյուր գործի քննությանը միաժամանակ մասնակցում է 3 դատավոր, որոնցից 2-ը պետք է լինեն միևնույն թիմից

[2] European Commission Directorate- General Justice and Consumers, Comparative table on COVID-19 impact on Civil Proceedings, էջ 13-14: Սույն և հաջորդիվ ներկայացվող համեմատական աղյուսակները հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://bit.ly/2ZcoSuK (այցելվել է 20.05.2020թ.):
[3] Նույն տեղում, էջ 19:
[4] Նույն տեղում, էջ 26:
[5] Նույն տեղում, էջ 27:
[6] Norton Rose Fulbright, COVID-19 and the global approach to further court proceedings, hearings, April 2020, https://bit.ly/2Z1jWJb (այցելվել է 20.05.2020թ.):

և գտնվեն դատական նիստերի դահլիճում, իսկ 3-րդը՝ կապի մեջ է մտնում տեսակապով[7]:

Նիդեռլանդների դատարաններում քննվում են բացառապես հրատապ գործերը: Նման գործերի կարգավիճակ ունեն սնանկության, կասկածյալներին կալանավորելու և ընտանեկան օրենսդրության որոշակի կատեգորիայի վերաբերյալ գործերը[8]:

բ. Թվային գործիքների կիրառում

Չեխիայում դատական լսումները հետաձգելու անհնարինության դեպքում վկաներին և մեղադրյալներին հարցաքննում են տեսակապի միջոցով[9]:

Էստոնիայում դատական գործերը հնարավորության դեպքում քննում են գրավոր ընթացակարգով, իսկ բանավոր ընթացակարգի անհրաժեշտություն լինելու դեպքում հնարավորինս ձգտում են օգտվել տեսակապից[10]:

Ֆինլանդիայում, Հունգարիայում, Իռլանդիայում, Իտալիայում, Նիդեռլանդներում և Շվեդիայում նույնպես կիրառվում է տեսակապ կամ հեռահաղորդակցության այլ միջոցներ, ընդ որում՝ Նիդեռլանդներում դրանք զուգակցվում են քննության գրավոր ձևի հետ[11]:

Գործերի քննության համար տեսակապ է կիրառում նաև **Մեծ Բրիտանիայի** Գերագույն դատարանը: Նիստերի ընթացքը և դատարանի որոշումների հրապարակումները հեռարձակվում են Գերագույն դատարանի պաշտոնական կայքով[12]: Քաղաքացիական գործեր քննող դատարանների նիստերը հնարավորության դեպքում իրականացվում են հեռահաղորդակցության գործիքների միջոցով (տեսակապ, հեռախոս և այլն): Առկա լսումները իրականացվում են միայն այն դեպքերում, երբ դրանց հեռավար իրականացումը անհնարին է[13]:

---

[7] Նույն տեղում:
[8] Նույն տեղում:
[9] Digital tools in member states, էջ 1, https://bit.ly/2ZgVH9H (այցելվել է 20.05.2020թ.):
[10] European Union Agency for fundamental rights, Coronavirus Covid-19 outbreak in the EU: Fundamental rights implications, Restrictions to public gatherings and entertainment, էջ 3, 23 March 2020, https://bit.ly/3dAFzDT (այցելվել է 20.05.2020թ.):
[11] Digital tools in member states, նշված աշխատանքը, էջ 1-2:
[12] UK Supreme Court, Arrangements during the Coronavirus (COVID-19) Pandemic, March 30, 2020, https://bit.ly/2SX6tOA (այցելվել է 20.05.2020թ.):
[13] COVID-19 and the global approach to further court proceedings, hearings, նշված աշխատանքը:

Բրազիլիայի, Չինաստանի, Հնդկաստանի և Սինգապուրի Գերագույն դատարանները որդեգրել են նույն մոտեցումը[14]:

ԱՄՆ Գերագույն դատարանը նախկինում հետաձգված գործերի քննությունը իրականացնելու է հեռախոսային հանդիպման ձևաչափով (telephone conference)[15]:

Կանադայի Վերաքննիչ դատարանում մեկ դատավորի կողմից քննվող գործերով նիստերը անցկացվելու են հեռախոսային հանդիպման ձևաչափով, իսկ 3 դատավորի կազմով գործերի նիստերը՝ տեսակապով կամ հեռախոսային հանդիպման ձևաչափով[16]:

գ. Քաղաքացիաիրավական և դատավարական ժամկետներ

Ֆրանսիայում քաղաքացիական դատավարության շրջանակներում գործողությունների կատարման ժամկետների ընթացքը կասեցվել կամ երկարաձգվել է[17]: Կասեցումը կամ երկարաձգումը տևելու է մինչև արտակարգ դրության ավարտը՝ գումարած մեկ ամիս: Ժամկետների ընթացքը վերսկսվում է նշված ժամկետը լրանալուց հետո: Կոնկրետ դատավարական գործողության կատարման ժամկետի կասեցման կամ երկարաձգման ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 2 ամիսը: Արտակարգ դրության գործողության ընթացքում չեն գործելու նաև քաղաքացիական պայմանագրերով նախատեսված որոշ դրույթներ, օրինակ՝ պարտապանի կողմից պարտավորության չկատարման հիմքով պայմանագրային հարաբերությունների դադարեցման և սանկցիաների կիրառման դրույթները[18]: Օրենքով սահմանված և պայմանագրային հարաբերություններին վերաբերող որոշ դրույթների գործողությունը նույնպես կասեցված է, օրինակ՝ ծանուցման ժամկետները,

---

[14] Richard Susskind, Covid-19 shutdown shows virtual courts work better, May 7, 2020, https://on.ft.com/2WplTxi (այցելվել է 20.05.2020թ.):
[15] US Supreme Court, Media Advisory Regarding May Teleconference Argument Audio, April 30, 2020, https://bit.ly/3fGxPSL (այցելվել է 20.05.2020թ.):
[16] COVID-19 and the global approach to further court proceedings, hearings, նշված աշխատանքը:
[17] Pauline Kubat, Covid-19: French rules of civil procedure have been adapted, the adaptation of time limits and civil-proceedings, 1 April 2020, https://bit.ly/3fFNCkl (այցելվել է 20.05.2020թ.): Տե՛ս նաև Ordonnance n° 2020-306 du 25 mars 2020 relative à la prorogation des délais échus pendant la période d'urgence sanitaire et à l'adaptation des procédures pendant cette même période, (Version consolidée au 23 mai 2020), 2-րդ հոդված, https://bit.ly/2WnwFUs (այցելվել է 20.05.2020թ.):
[18] Linklaters, Covid-19: Impact on commercial contracts- France, Paralysis of certain contractual clauses, April 9, 2020, https://bit.ly/35MATZ8 (այցելվել է 20.05.2020թ.): Տե՛ս նաև Ֆրանսիայի կառավարության օրդոնանսի 4-րդ հոդվածը:

պայմանագրի նորոգումը և պարտավորությունների չկատարման համար սանկցիաները[19]:

Իտալիայում կասեցված են դատավարական և հարկադիր կատարման գործողությունների ժամկետները: Կասեցված են նաև դատական ակտերի ընդունման և դրանց հիմնավորման համար նախատեսված ժամկետները: Նշված կարգավորումները չեն գործում որոշ բացառիկ դեպքերում, օրինակ՝ դատավարական գործողությունները, որոնց չկատարումը կարող է լուրջ վնաս հասցնել դատավարության մասնակիցներին[20]:

Իսպանիայում և **Լյուքսեմբուրգում** ընդունվել են համանման կարգավորումներ[21]:

դ. Դատական ակտերի հարկադիր կատարում

Ավստրիայում դատական ակտերի հարկադիր կատարումը իրականացվում է միայն այն դեպքում, երբ առկա է անձի կյանքին, առողջությանը, ազատությանը, անվտանգությանը սպառնացող վտանգ, կամ էական և անդառնալի վնաս կանխելու անհրաժեշտություն[22]:

Խորվաթիայիում հետաձգվել են հարկադիր աճուրդները և սնանկացման գործընթացները: Մասնավորապես, 3 ամսով կասեցվել են ֆիզիկական անձանց դրամական միջոցները բռնագանձելու վարույթները, ընդ որում այս ժամկետը կարող է երկարաձգվել ևս 3 ամսով: Միաժամանակ, հարկադիր կատարման ծառայություններին առաջարկվել է հետաձգել այն հարկադիր վարույթները, որոնք ենթադրում են անշարժ գույքի ազատում և փոխանցում[23]:

Լիտվայում դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը անցել է հեռավար աշխատանքի: Մասնավորապես, հարկադիր կատարման նոր վարույթների վերաբերյալ թերթիկները ուղարկվում են էլեկտրոնային փոստի միջոցով կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության տեղեկատվական

[19] Comparative table on COVID-19 impact on Civil Proceedings, նշված աշխատանքը, էջ 13:
[20] International union of judicial officers, Courts Tribunaux, էջ 2, https://bit.ly/2WPflqz (այցելվել է 20.05.2020թ.): Նշված միջոցառումները ուժի մեջ են եղել 09.03.2020 – 11.05.2020:
[21] Նույն տեղում, էջ 4-5:
[22] Comparative table on COVID-19 impact on Civil Proceedings, նշված աշխատանքը, էջ 2:
[23] Նույն տեղում, էջ 6-7:

համակարգի միջոցով[24]: Կարանտինի ողջ ընթացքում չեն անցկացվելու հարկադիր աճուրդներ[25]:

ե. Նոտարիատ

Բուլղարիայում նոտարական ծառայությունները մատուցվում են միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Նախատեսվել է նոտարների հերթապահություն. յուրաքանչյուր 50.000 բնակչությանը պետք է սպասարկի առնվազն մեկ նոտար[26]:

Մալթայում կասեցվել են նոտարների կողմից գործարքները վավերացնելու ժամկետները (օրինակ՝ կտակ): Կասեցվել են նաև նոտարների կողմից հարկային պարտավորությունների կատարման, իրավասու մարմիններին նոտարական գործունեությանը առնչվող փաստաթղթեր և տեղեկատվություն տրամադրելու ժամկետները: Կասեցումը շարունակվում է դատարանների աշխատանքի դադարեցման ամբողջ ընթացքում և շարունակվում է ևս 20 օր աշխատանքները վերսկսելուց հետո[27]:

2.2. Քրեական իրավունք և դատավարություն

ա. Քրեակատարողական հիմնարկներ և խափանման միջոցների կիրառում

Ֆրանսիայում կասեցվել են մի քրեակատարողական հիմնարկից (այսուհետ՝ ՔՀԿ) մեկ այլ ՔՀԿ անձանց տեղափոխումները: Քրեադատավարական գործողություններին մասնակցելու համար ՔՀԿ-ներում գտնվող անձանց հետ կապը հաստատվելու է հեռահաղորդակցության միջոցների օգնությամբ, ինչի արդյունքում անհրաժեշտություն չի լինի նրանց դուրս բերել բանտից[28]: Կասեցված են ՔՀԿ-ներում գործունեության որոշ կատեգորիաներ (սոցիալական, կրթական, սպորտային միջոցառումները, արհեստանոցներում աշխատանքը), միջին մասնագիտական կրթությանն ուղղված դասընթացները: Զբոսնել և սպորտով կարող են զբաղվել միայն սահմանափակ թվով բանտարկյալներ: ՔՀԿ-ների տարածքում գործելու են միայն առաջին անհրաժեշտության սպասարկման ծառայությունները՝ մաքրման ծառայությունը, խոհանոցը, սննդի բաշխման, առաջին բուժօգնության ծառայությունը: Կիրառված սահմանափակումների ազդեցությունը մեղմելու համար նախատեսվում է

[24] http://www.antstoliai.lt/ (այցելվել է 20.05.2020թ.):
[25] Comparative table on COVID-19 impact on Civil Proceedings, նշված աշխատանքը, էջ 21:
[26] Նույն տեղում, էջ 3:
[27] Mary Rose Micallef, COVID-19- Legal Lockdown (Part X), April 1, 2020, https://bit.ly/35WoiTc (այցելվել է 20.05.2020թ.):
[28] Europris, Prevention Measures in European Prisons against COVID-19 (France), Legal measures https://bit.ly/2WJfNYE (այցելվել է 20.05.2020թ.):

ՔՀԿ-ում պահվող յուրաքանչյուր անձի տալ անվճար հեռուստացույց դիտելու հնարավորություն և ամսական 40 եվրո գումար՝ հեռախոսով խոսելու համար: Ստեղծվելու է ձայնային հաղորդագրությունների ծառայություն, որի օգնությամբ դատապարտյալների հարազատները ձայնագրելու են հաղորդագրություններ: Ծառայությունը ունի մի շարք առավելություններ.

- Հնարավորություն է տալիս օգտատերերին ցանկացած պահի փոխանակել ձայնային հաղորդագրություններ: Լուծումը օգտակար է հատկապես այն դեպքերում, երբ ազատազրկվածի հարազատը զբաղվածության բերումով չի կարող պատասխանել հեռախոսազանգին:
- Գերծանրաբեռնված ժամերին ազատազրկված անձը ստիպված չէ սպասել հերթում, այլ կարող է ընդունել և ուղարկել հաղորդագրություններ առավել թեթև ժամերի:
- Հնարավորություն է ստեղծվում առավել ճշգրիտ պլանավորել հանդիպումների և զանգերի ժամանակացույցը:
- Առավել ճկուն շփման հնարավորություն է ընդձեռնում, քանի որ օգտատերերը կարողանում են մտքեր փոխանակել անգամ երբ իրենց ժամանակացույցները չեն համընկնում:
- Ֆինանսական առումով ավելի մատչելի է, քան բջջային կապը: Միաժամանակ, ազատազրկվածի հարազատը կարող է հաղորդագրությունը ստանալուց հետո անմիջապես պատասխանել դրան՝ բջջայինով[29]:

ՔՀԿ-ում պահվող անապահով անձանց համար նախատեսված ֆինանսական օգնության չափը կրկնապատկվել է՝ 20-ից 40 եվրո: Նախկինում օգնություն էին ստանում միայն այն անձինք, որոնց ամսական եկամուտը չէր գերազանցում 50 եվրոն: Ճգնաժամի առկայությամբ պայմանավորված՝ այժմ օգնություն ստանալու են 100 եվրոյից ցածր եկամուտ ունեցող անձինք: Այս միջոցառումը նախաձեռնելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ արհեստանոցներում աշխատանքը և մասնագիտական տեխնիկական-մասնագիտական կրթությանն ուղղված դասընթացները կասեցվել են, իսկ ՔՀԿ-ներում պահվող անձանց ընտանիքների համար ավելի դժվար է նյութական օգնություն ցուցաբերել[30]:

Ավստրիայում սահմանվել է ՔՀԿ-ների անձնակազմի աշխատանքի հատուկ կարգ: Մասնավորապես, անձնակազմը պետք է աշխատի խմբերով, ընդ որում՝ նույն ընտանիքի անդամները չպետք է աշխատեն տարբեր խմբերում[31]:

Խորվաթիայի արդարադատության նախարարը առաջարկել է դատարաններին հնարավորության դեպքում հետաձգել պատիժը կրելու նպատակով

[29] Prison Voicemail, Frequently Asked Questions, https://prisonvoicemail.com/faqs:
[30] Prevention Measures in European Prisons against COVID-19 (France), նշված աշխատանքը, Activities/compensation:
[31] Europris, Prevention Measures in European Prisons against COVID-19 (Austria), Staff, https://bit.ly/3g2RXPf (այցելվել է 20.05.2020թ.):

անձանց տեղափոխումը ՔՀԿ-ներ: Պատիժը կրելու նպատակով ՔՀԿ տեղափոխումը կարող է հետաձգվել նաև իրավախախտների դիմումների հիման վրա: Միաժամանակ առաջարկվել է բավարարել դատապարտվածների դիմումները՝ ազատազրկման ձևով պատիժը կասեցնելու (intermission) վերաբերյալ: Կրճատվել է նախնական կալանքում գտնվող անձանց թիվը, քանի որ դատարանները հնարավորինս չեն երկարաձգում ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցները: ՔՀԿ-ներում աշխատանքը կազմակերպվել է այնպես, որ հիմնարկի տարածքում գտնվի միայն այնքան ծառայող, որքան անհրաժեշտ է ՔՀԿ-ի նորմալ գործունեությունն իրականացնելու համար: Հնարավորության դեպքում ՔՀԿ-ի անձնակազմը բաժանվում է երկու թիմի: Թիմերի բաժանումը անհրաժեշտ է, որպեսզի անձնակազմի միջև շփումները նվազեն և վարակը չտարածվի: Անձնակազմի սպայական մասին խորհուրդ է տրվում հնարավորության դեպքում արձակուրդ մեկնել և մնալ տանը: ՔՀԿ-ների վարչություններին հանձնարարվել է համագործակցել ճգնաժամի ամբողջ ընթացքում: Համագործակցության շրջանակներում ՔՀԿ-ները անհրաժեշտության դեպքում փոխանակելու են սարքավորումներ, պաշտպանիչ միջոցներ և այլն[32]:

Ֆինլանդիայում սկզբնապես Արդարադատության նախարարության որոշմամբ հետաձգվեց պատժի կրման նպատակով այն անձանց տեղափոխման գործընթացը, որոնց ազատազրկման ժամկետը առավելագույնը 6 ամիս էր: Որոշումը տարածվում է նաև վարչական իրավախախտումներով սահմանված տուգանքների չվճարման համար ազատազրկման կիրառման գործընթացների վրա՝ 2020թ. մարտի 19-ից հունիսի 19-ը ընկած ժամանակահատվածի համար: Միջոցառումը իրականացվել է ՔՀԿ-ներում կարճաժամկետ դատապարտվածների թիվը նվազեցնելու և վարակի տարածումը կանխելու համար: 2020 թվականի ապրիլի 7-ին, սակայն, Ֆինլանդիայի խորհրդարանն ընդունել է օրենք, որով հետաձգվում է դատապարտված անձանց տեղափոխումը ՔՀԿ՝ ապրիլի 10-ից հուլիսի 31-ը ընկած ժամանակահատվածում[33]: Դրանով ուժը կորցրեց նախարարի՝ վերը նշված որոշումը: Ի տարբերություն արդարադատության նախարարության կայացրած որոշման՝ այս օրենքը տարածվում է բոլոր դատապարտվածների վրա՝ անկախ ազատազրկման տևողությունից, ինչպես նաև վարչական իրավախախտումներով սահմանված տուգանքների չվճարման համար ազատազրկման կիրառման գործընթացների վրա[34]: Օրենքը, սակայն, չի տարածվում նախնական կալանքի տակ գտնվող այն անձանց վրա, որոնց նկատմամբ կայացվել է ազատազրկման վերաբերյալ դատավճիռ:

[32] Europris, Prevention Measures in European Prisons against COVID-19 (Croatia), Staff, https://bit.ly/36gdDD8 (այցելվել է 20.05.2020թ.):
[33] Օրենքով չեղարկվել է նախարարության կայացրած որոշումը:
[34] Europris, Prevention Measures in European Prisons against COVID-19 (Finland), Legal measures, https://bit.ly/3g4kuE8 (այցելվել է 20.05.2020թ.):

Իտալիայում մինչև հունիսի 30-ը դատապարտյալները հնարավորություն ունեն իրենց դիմումի հիման վրա պատժի կրումը շարունակել տանը, հանրային կամ մասնավոր բժշկական կենտրոնում: Դիմումը բավարարելու նախապայմանը այն է, որ ազատազրկման տևողությունը չպետք է գերազանցի 18 ամիսը: Տեղափոխման համար կարող են դիմել նաև այն անձինք, որոնց սկզբնական ազատազրկման ժամկետից մնացել է 18 ամիս: Այս հնարավորությունից չեն կարող օգտվել նրանք, ովքեր դատապարտվել են մաֆիայի կազմում կատարած հանցագործությունների, ահաբեկչության, փրկագին ստանալու նպատակով առևանգման, թմրամիջոցների միջազգային թրաֆիքինգի, ընտանեկան բռնության և ոտնձգությունների համար, ինչպես նաև կրկնահանցագործները և վերջին շրջանի բանտային ապստամբությունների մասնակիցները[35]:

Իրանում վարակի տարածումը կանխելու նպատակով ժամանակավորապես ազատ է արձակվել 85.000 բանտարկյալ[36]:

ԱՄՆ-ում ազատ է արձակվել ավելի քան 16.000 կալանավոր, որոնց մեծ մասը համարվում է վտանգ չներկայացնող կամ մեղադրվում է հասարակական մեծ վտանգավորություն չներկայացնող հանցագործությունների մեջ[37]:

Ֆրանսիայում ավելի քան 11.000 անձ ազատ է արձակվել, չնայած դրա արդյունքում աճել են կրկնահանցագործությունները: Ազատ արձակվածների թվում են թե՛ կալանավորվածները, թե՛ այն դատապարտյալները, որոնց ազատազրկման ժամկետին մնում էր 3 ամիս[38]:

Գերմանիայի Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիա երկրամասում ազատ է արձակվել 1.000 բանտարկյալ[39]:

Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական հանձնաժողովը հրապարակել է վարակի ընթացքում

[35] Europris, Prevention Measures in European Prisons against COVID-19 (Italy), General prevention measures, https://bit.ly/2Tkbn8n (այցելվել է 20.05.2020թ.):
[36] Parisa Hafezi, Iran temporarily frees 85.000 from jail including political prisoners, March 17, 2020, https://reut.rs/3boiyT8 (այցելվել է 20.05.2020թ.):
[37] Nick Givas, over 16k US inmates have been released as coronavirus crisis has progressed, April 16, 2020, https://fxn.ws/3cIBKMY (այցելվել է 20.05.2020թ.):
[38] Monique El-Faizy, Challenged abound for released early from French prisons due to Covid-19, 05/05/2020, https://bit.ly/3cKYRqk (այցելվել է 20.05.2020թ.):
[39] John Cody, Thousands of prisoners and detained migrants released early across Europe due to coronavirus, April 13, 2020, https://bit.ly/2YRWfTp (այցելվել է 20.05.2020թ.):

ազատությունից զրկված անձանց նկատմամբ վերաբերմունքի սկզբունքներ[40]: Փաստաթղթի 5-րդ սկզբունքը սահմանում է, որ իրավասու մարմինները հնարավորինս պետք է խուսափեն ազատության սահմանափակում ենթադրող միջոցառումների օգտագործումից և կիրառեն այլընտրանքային միջոցներ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է նախնական կալանքին:

3. ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արդարադատության ոլորտի վրա համաճարակի ազդեցությունը մեղմելու և պետական մարմինների բնականոն աշխատանքը ապահովելու նպատակով Հայաստանում նույնպես ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ: Արտակարգ դրությամբ պայմանավորված փոփոխություններ են իրականացվել ՔԿՀ-ների, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության և դատական համակարգի աշխատանքային ռեժիմում:

Ուսումնասիրության առարկա ոլորտներում Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկված միջոցառումները առաջին հերթին տեղ են գտել «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման մեջ[41] և դրա հետագա փոփոխություններում:

ա. Դատարանների գործունեության կազմակերպում

Համաճարակի պայմաններում դատական համակարգի բնականոն աշխատանքը ապահովելու նպատակով ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը 2020 թվականի մարտի 24-ին կայացրել է «Պարետի 2020 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հանրային ծառայության իրականացման նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ» թիվ 15 որոշման կատարումն ապահովող միջոցառումների մասին» ԲԴԽ-12-Ո-25 որոշումը[42]:

---

[40] Statement of principles relating to the treatment of persons deprived of their liberty in the context of the coronavirus disease (COVID-19) pandemic European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT), issued on 20 March 2020, CPT/Inf(2020)13, https://rm.coe.int/16809cfa4b:

[41] Ընդունվել է ՀՀ կառավարության կողմից 2020 թվականի մարտի 16-ին, ՀՀՊՏ, 2020.03.16/ Հատուկ թողարկում 257.5, 298-Ն: Սույն ուսումնասիրության մեջ ներկայացվում է կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի 729-Ն որոշմամբ կատարված փոփոխություններով տարբերակը, http://www.irtek.am/views/act.aspx?aid=152485:

[42] Ընդունվել է ՀՀ բարձրագույն դատական խորհրդի կողմից 2020 թվականի մարտի 24-ին, ԲԴԽ-12-Ո-25, https://www.irtek.am/views/act.aspx?aid=104450:

Որոշմամբ նախատեսվում է.

- Դատական նիստերի հեռավար/առցանց իրականացում, եթե առկա է դատավարության մասնակիցների համաձայնությունը:
- Դատարանների աշխատանքը պետք է ապահովվի աշխատակիցների հնարավոր նվազագույն թվաքանակով:
- Դատարանների գրասենյակներում կազմակերպել հերթապահություն՝ նվազագույնի հասցնելով հերթապահ աշխատակիցների քանակը:
- Դատական կարգադրիչների ծառայության միջոցով արգելել դատարանների վարչական շենքեր մուտք գործել բոլոր այն անձանց, ովքեր չեն հանդիսանում տվյալ օրը կոնկրետ դատարանում նախապես նշանակված դատական նիստերով դատավարության մասնակիցներ (ներկայացուցիչներ):
- Բարձրագույն դատական խորհրդին, դատարաններին, դատավորների ընդհանուր ժողովին և Դատական դեպարտամենտին հասցեագրված ցանկացած փաստաթուղթ ընդունվելու է էլեկտրոնային եղանակով[43]:
- Դատարանների վարույթում գտնվող գործերի նյութերին ծանոթանալու իրավունքի իրականացումն ապահովել բոլոր հասանելի էլեկտրոնային հավելվածների կիրառման միջոցով:
- Դատավորներին առաջարկել ընդունել էլեկտրոնային եղանակով ստացված փաստաթղթերը՝ հետագայում, ըստ անհրաժեշտության, դրանց բնօրինակները պահանջելու պայմանով:
- Առաջարկել դատավորներին և դատավարության մասնակիցներին, նախապես համաձայնեցնելով, հետաձգել բոլոր դատական նիստերը՝ բացառությամբ անհապաղ քննության ենթակա գործերի:

բ. Դատական ակտերի հարկադիր կատարում

2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման 15.1 կետով սահմանափակվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 124[7]-րդ հոդվածի (համայնքներում վճարովի ավտոկայանատեղերի համար օրենքով սահմանված տեղական տուրքը չվճարելը) հիմքով կայացված վարչական ակտերի, ինչպես նաև ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից կայացված վարչական ակտերի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»

[43] Էլեկտրոնային փոստի հասցեները՝ http://court.am/hy/news/267 (այցելվել է 20.05.2020թ.):

Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի (դրամական պահանջների կատարման կարգ) պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումով 2020 թվականի ապրիլի 14-ից հետո հարուցված կատարողական վարույթներով պարտապանի գույքի վրա արգելանք դնելու լիազորությունը: Արգելանքները ենթակա են կիրառման արտակարգ դրությունը դադարելուց հետո:

Նույն կետով սահմանափակվել է նաև կառավարության կողմից սահմանված՝ վարակի հետևանքների չեզոքացման միջոցառումների շրջանակներում 2020 թվականի մարտի 16-ից հետո ֆիզիկական և իրավաբանական անձանց որպես աջակցություն տրամադրված դրամական միջոցների վրա արգելանք դնելու և բռնագանձում կատարելու լիազորությունը:

Պարետի 2020 թվական մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ» N 63 որոշման 2-րդ հավելվածով սահմանվել են նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատանքի կազմակերպման կանոններ[44]: Ընդհանուր կանոնների համաձայն՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բոլոր մարմինների գործունեությունը հնարավոր բոլոր դեպքերում իրականացվում է հեռավար/առցանց եղանակով՝ միաժամանակ ապահովելով մարմնի գործառույթների անխափան իրականացումը: Առցանց ծառայությունների առկայության դեպքում նշված մարմինները միջոցներ են ձեռնարկում դրանք հնարավորինս էլեկտրոնային եղանակով մատուցելու համար: Զուգահեռաբար ծառայությունների առցանց մատուցման վերաբերյալ պետք է իրականացվեն հանրային իրազեկման արշավներ: Քաղաքացիների սպասարկման կանոնների համաձայն՝ սպասարկման գրասենյակներում պետք է ապահովվի անձնակազմի հնարավոր նվազագույն ներգրավվածություն և շփում քաղաքացիների հետ: Հնարավորության դեպքում անհրաժեշտ է ապահովել քաղաքացիների ընդունելություն՝ ըստ նախնական էլեկտրոնային կամ հեռախոսային հերթագրման, կենսաթոշակային տարիքի անձանց պետք է սպասարկել առանձին՝ բացառելով շփումը այլ անձանց հետ: Սպասարկման գրասենյակներում անհրաժեշտ է բացառել մարդկանց կուտակումները: Եթե կա կուտակումների առաջացման վտանգ, ապա պետք է ապահովել մարդկանց մուտքի գործընթացի կառավարմանն ուղղված միջոցառումներ: Մասնավորապես նախատեսվում է սահմանափակել մարդկանց մուտքը փակ տարածք՝ մինչև ներսում գտնվող մարդկանց որոշակի քանակի դուրս գալը: Հերթերը բացառելու և սոցիալական հեռավորությունն ապահովելու նպատակով

[44] Ընդունվել է ՀՀ պարետի կողմից, 2020 թվականի մայիսի 3-ին, Հատուկ թողարկում, N 63 https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142472:

վճարման տերմինալների, սպասարկման տաղավարների մոտ առնվազն իրարից մեկ մետր հեռավորությամբ անհրաժեշտ է իրականացնել գծանշում:

գ. Քրեակատարողական հիմնարկներ և խափանման միջոցների կիրառում

«Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված են քրեակատարողական հիմնարկներում և ձերբակալվածներին պահելու վայրերում գործող հատուկ կանոնները: Մասնավորապես, սահմանվել է, որ թույլատրվում է շաբաթական մեկ անգամ մեկ հանձնուքի, ծանրոցի կամ փաթեթի ստանալը կամ ուղարկելը: Սահմանվել է, որ անձին հանձնուք, ծանրոց կամ փաթեթ ուղարկելու կամ տանալու նպատակով ՔՀԿ կամ ձերբակալվածներին պահելու վայրի տարածք կարող է մուտք գործել միայն մեկ անձ: Միաժամանակ արգելվել են տեսակցությունները՝ բացառությամբ տեսազանգից օգտվելու դեպքերի: Նախատեսվել է նաև, որ ՔՀԿ-ի առաջարկությամբ և պարետի որոշմամբ կարող են սահմանափակվել կամ արգելվել՝ զբոսանքները, քրեակատարողական հիմնարկի տարածքի սահմաններում և դրանից դուրս գտնվելը (այդ թվում՝ կարճաժամկետ մեկնելը), տարածքի սահմաններում տեղաշարժվելը: Սահմանափակումների ցանկը սպառիչ չէ, և պարետի որոշմամբ կարող են սահմանվել լրացուցիչ սահմանափակումներ:

4. ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Արդարադատության ոլորտում վարակի տարածման հետևանքով այլ երկրներում ձեռնարկված միջոցառումների համեմատական ուսումնասիրության արդյունքներով հնարավոր է վեր հանել մի շարք այլ միջոցառումներ, որոնց իրականացումն ավելի կնպաստի Հայաստանում ոլորտի առջև ծառացած խնդիրների հաղթահարմանը: Այսպես.

- Հնարավոր է դիտարկել որոշ կատեգորիայի գործերի քննության անցկացումը բացառապես գրավոր ընթացակարգով: Օրինակ՝ հայցագնով պայմանավորված մանր քաղաքացիական գործերը:

- Դատարանների միջև գործերի վերաբաշխման հնարավորություն ընձեռնել՝ ծանրաբեռնվածության նվազեցման նպատակով: Վերաբաշխման միջոցով հնարավոր կլինի գործերի որոշ մասը ծանրաբեռնված դատարաններից

փոխանցել առավել թեթև ռեժիմով աշխատող դատարաններ: Նույն նպատակին կարելի է հասնել նաև դատավորների գործուղելու միջոցով:

- Քննարկման առարկա է արտակարգ դրության ողջ ընթացքում դատական ակտերի հարկադիր կատարման բոլոր վարույթների հիմնական մասի կասեցումը: Որպես բացառություն կարելի է սահմանել այն դեպքերը, երբ առկա է անձի կյանքին, առողջությանը, ազատությանը, անվտանգությանը սպառնացող վտանգ կամ էական և անդառնալի վնաս կանխելու անհրաժեշտություն: Առաջարկվում է նաև արտակարգ դրության ընթացքում չանցկացնել հարկադիր աճուրդներ:

- «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացի-պահանջատիրոջ կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում դատարանը կարող է այն վերականգնել: Եթե ժամկետի ուշացումը տեղի է ունեցել արտակարգ դրության հիմքով հայտարարված սահմանափակումների պատճառով, անհրաժեշտ է նախատեսել մեխանիզմ, որը հնարավորություն կտա վերականգնել բաց թողնված ժամկետները առանց դատարան դիմելու՝ ավելի պարզեցված կարգով, ինչը թույլ կտա չծանրաբեռնել դատարաններին:

- ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 1543-Ն որոշման 182-րդ կետի համաձայն[45]՝ կալանավորված անձը կամ դատապարտյալը յուրաքանչյուր դեպքում կարող է օգտվել հեռախոսակապից առավելագույնը 15 րոպե: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեսակցությունները արգելված են, առաջարկվում է ավելացնել թույլատրված հեռախոսային խոսակցությունների ժամանակը, ինչպես նաև ընդլայնել դատապարտյալների զբաղմունքն ապահովելու, սոցիալականացման և ընտանիքի անդամների հետ կապի հնարավորություն տվող այլընտրանքային կառուցակարգերը (ձայնային հաղորդագրություններ, հեռուստացույց դիտելու հնարավորություն և այլն):

[45] Ընդունվել է ՀՀ կառավարության կողմից 2006 թվականի հունիսի 3-ին, ՀՀՊՏ, 2006.11.22/60(515), հոդ.1217, N 1543-Ն, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140547:

- Ոչ մեծ ծանրության հանցագործություններ կատարած անձանց տեղափոխումը ՔՀԿ-ներ կարող է հետաձգվել մինչև արտակարգ դրության ավարտը: Միաժամանակ, ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար դատապարտված այն անձինք, ովքեր մինչև արտակարգ դրություն հայտարարելը արդեն իսկ տեղափոխվել էին ՔՀԿ, կարող են պատժի մնացածը մասը կրել տնային պայմաններում: Նպատակահարմար կարող է լինել նաև պատժի կրման ավարտից շուտ ազատ արձակել նաև այն անձանց, որոնց ազատազրկման ժամկետը գրեթե լրացել է: Որպես շեմ կարող են ընդունվել այն դեպքերը, երբ պատժի կրմանը մնացել է, օրինակ՝ 3-4 ամիս: Նպատակահարմար է նաև դիտարկել ազատազրկման հետ կապված խափանման միջոցների վերանայման հարցը՝ կիրառելով այլընտրանքային միջոցներ:

- Իրավասու մարմինները հնարավորինս պետք է խուսափեն ազատության սահմանափակում ենթադրող խափանման միջոցի կիրառումից և սահմանափակվեն խափանման այլընտրանքային միջոցներով: Պետք է նաև հնարավորինս կրճատել նախնական կալանքում գտնվող անձանց թիվը՝ չերկարաձգելով ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցները:

Վերլուծությունը պատրաստվել է «Լույս» հիմնադրամի իրավական ուղղության վերլուծաբան Համլետ Ավետիսյանի կողմից

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*